288 Աշխարհում չունեի սուրբ սեր,

1. Աշխարհում չունեի սուրբ սեր,
Սուրբ սեր տվիր, Հիսո՛ւս, ի՛մ Տեր,
Աշխարհում չունեի սուրբ կյանք,
Սուրբ կյանք տվիր, Փրկի՛չ իմ Տեր:

Ջրի վրայով քայլում եմ ես
Ու չեմ սուզվում Պետրոսի պես,
Զորությունդ է ինձ պահում,
Հոգիս դեպ Քեզ է սավառնում:

2. Անգին սերդ ինձ կանչում է,
Ամենուրեք ինձ գտնում է,
Ոտքերիս տակ ջուրն ես հարթել,
Որ չսուզվեմ, դեպ Քեզ քայլեմ:

3. Հարթ է ճամփաս, առջևս՝ լույս,
Միայն Քեզ եմ տեսնում, Հիսո՛ւս,
Ձեռքս եմ մեկնել, Քեզ եմ գալիս,
Ո՞վ իմ կյանքի փրկարար հույս:

4. Չեմ երկմտի, որ չսուզվեմ,
Քայլեմ վստահ ծովի վրայով,
Քեզանով ես պիտի փրկվեմ
Ու գամ երկինք՝ Հայր Աստծո մոտ: